




## Մաթեմատիկա

### 5-րդ դասարան ընդունվողների համար, 2017-2018 ուստարի


Շրջանակի մեջ վերցրու՛ 1-10-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները:

- Գտի՛ր այն հնգանիշ թիվը, որի հարյուրավորը 3 է, միավորը՝ 8, իսկ մնացած կարգերում գրված է 4:  
1) 44348                      2) 44438                      3) 44384                      4) 83348
- Որքանո՞վ կմեծանա եռանիշ թիվը, եթե նրա գրությանը ձախից կցագրենք 7 թվանշանը:  
1) 7-ով                      2) 70-ով                      3) 700-ով                      4) 7000-ով
- Ընտրի՛ր տրված թվերից այն թիվը, որը 4-ի վեցապատիկից մեծ է 10-ով:  
1) 24                      2) 34                      3) 36                      4) 80
- Ընտրի՛ր տրված թվանշաններից այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս անհավասարություն.  $6$  կմ  $47$  մ  $>$   $6$  կմ  $\cdot$   $3$  մ  
1) 4                      2) 5                      3) 7                      4) 9
- Ընտրի՛ր այն շարքը, որտեղ թվերը դասավորված են նվազման կարգով.  
1) 3798, 4136, 57489, 76815                      3) 76815, 3798, 57489, 4136  
2) 4136, 57489, 3798, 76815                      4) 76815, 57489, 4136, 3798
- Բանվորը գնեց 900 մ լար: Նա շինարարական աշխատանքներում օգտագործեց այդ լարի  $\frac{1}{5}$  մասը: Քանի՞ մետր լար նա օգտագործեց:  
1) 180                      2) 250                      3) 380                      4) 400
- Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է 8 կգ 11 գ-ը գրամներով:  
1) 811 գ                      2) 8010 գ                      3) 8011 գ                      4) 8101 գ
- Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է 6 ժ 22 ր-ն րոպեներով:  
1) 352 ր                      2) 382 ր                      3) 482 ր                      4) 622 ր
- Քառակուսու երկու կողմերի երկարությունների գումարը հավասար է 32 սմ: Գտի՛ր քառակուսու պարագիծը: Նշի՛ր ճիշտ պատասխանը:  
1) 1 սմ                      2) 64 սմ                      3) 86 սմ                      4) 114 սմ


10. Նշի՛ր այն գծապատկերը, որի  $\frac{3}{10}$  մասը ներկված է:




1)



2)



3)



4)

11-15- րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը գրի՛ր յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում:

11. Հաշվի՛ր բեկյալի երկարությունը, եթե նրա կողմերի երկարությունները 11 սմ, 32 սմ , 29 սմ և 48 սմ են:

Պատասխան՝ \_\_\_\_\_

11. Հաշվի՛ր բոլոր այն երկնիշ թվերի գումարը, որոնց միավորը 4 է:

Պատասխան՝ \_\_\_\_\_

13. Դի՛ր փակագծերն այնպես, որ ստացվի հավասարություն:

$$4500 : 90 + 30 \cdot 6 = 480$$

Պատասխան՝ \_\_\_\_\_

14. Հաշվի՛ր  $6314 + 28 \cdot (24300 : 60 - 298)$  արտահայտության արժեքը:

Պատասխան՝ \_\_\_\_\_

15. Կռահի՛ր օրինաչափությունը և տրված թվերից հետո ավելացրո՛ւ ևս մեկ թիվ.

$$3, 7, 15, 31, \dots :$$

16-17-րդ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը մանրամասն ու հիմնավորված ներկայացրու՝ առաջադրանքներից հետո նշված տեղում:

16. Ուղղանկյան լայնությունը 23 մ է, որը կազմում է երկարության  $\frac{1}{4}$  մասը: Գտի՛ր ուղղանկյան մակերեսը:


Պատասխան՝ \_\_\_\_\_

17. Համառոտագրի՛ր և լուծի՛ր:

Բեռնատարը երկու օրում մինևույն արագությամբ անցավ 3800 կմ ճանապարհ: Առաջին օրը նա ճանապարհի վրա ծախսեց 14 ժամ, իսկ երկրորդ օրը՝ 3 ժամ պակաս: Որքա՞ն ճանապարհ նա անցավ առաջին օրը:


Պատասխան՝ \_\_\_\_\_

Ընդհանուր միավորը՝ -----